ԲԱԶՄԱԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԵՎ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 1990-2002 ԹԹ.-ԻՆ

ԳԱՐԻԿ ՔԵՌՅԱՆ, ՎԱՀԵ ՊՈՂՈՍՅԱՆ

Բանալի բառեր – Հայաստանի Հանրապետություն, քաղաքական կուսակցություն, կուսակցական լիդեր, պետություն, բազմակարծություն, բազմակուսակցություն, քաղաքական համակարգ:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության անկախության հռչակումից հետո խիստ անհրաժեշտություն էր դարձել պետության ու իշխանության կազմակերպման տեղական մոդելի մշակման պահանջը: Հայաստանի Հանրապետության պետականության արդյունավետ կայացումը ենթադրում էր պետության կառուցման ու գործարկման այնպիսի մոդել մշակում, որը կսահմանի ժամանակին համահունչ պետական կարգ, կառավարման ձև, իշխանական մեխանիզմներ, որոնք պետք է հիմնված լինեն «զսպումների ու հակակշիռների» արդյունավետ գործարկվող համակարգի վրա, ինչպես նաև նպաստեն պետական մարմինների կայունության ապահովմանը և արդյունավետ փոխգործակցությանը: ԽԱՀՄ-ի փլուզումից շատ չանցած նոր աշխարհակարգի ստեղծման նպատակով իրացվող գործընթացներն հստակորեն ապացուցեցին, որ ժամանակակից աշխարհը թևակոխել է քաղաքական կերպափոխությունների որակապես նոր փուլ: Այս առումով, կարևորում ենք ԽՍՀՄ փլուզումից հետո Հայաստանի երրորդ

Հանրապետությունում բազմակուսակցական համակարգի հաստատման գործընթացը և կուսակցությունների ինստիտուցիոնալացման առանձնահատկությունների մեկնաբանումը[1]: Խորհրդային Միության փլուզմամբ հետխորհրդային հանրապետություններում առաջացավ աննախադեպ հասարակական-քաղաքական իրավիճակ, որը հիմք հանդիսացավ հասարակական կյանքի բոլոր ոլորտներն ընդգրկող համակարգային փոխակերպումների իրականացման[2]: Համակարգային փոխակերպումների արդյունավետ ներդրումը պահանջում էր հասարակական և քաղաքական հարաբերությունների կարգավորման արդիական մեխանիզմների մշակում և իրացում, քանի որ պարզ էր՝ նախկին խորհրդային մեխանիզմների և մոտեցումները սպառել էին իրենց: Այլ խոսքով՝ գործող հասարակարգի փոփոխությունը և քաղաքական վարչակարգի փոխակերպումը պահանջում էին նոր ձևով և բովանդակությամբ ժողովրդավարական քաղաքական ինստիտուտների և քաղաքական մշակույթի ձևավորում, որն, ըստ կարծիքի, պետք է հիմնվեր ժողովրդավարական արժեհամակարգի ազատական գաղափարների վրա[3]: Հենց սա էր պատճառը, որ ժողովրդավարության արևմտյան փորձը և քաղաքական ինստիտուտները դիտարկվում էին որպես ցանկալի մոդելներ նորանկախ հանրապետությունների (այդ թվում նաև Հայաստանի Հանրապետության համար) քաղաքական արդիականացման համար: Ինչպես նշվեց, հետխորհրդային Հայաստանը ևս անմասն չմնաց քաղաքական ազատականացման գործընթացից, և այս առումով արևմտյան հասարակական և քաղաքական կյանքին բնորոշ քաղաքական բազմակարծությունը, բազմակուսակցականության գաղափարները և այլ ժողովրդավարական մեխանիզմներ, ինստիտուտներ և արժեքներ, որոնք որևէ կերպով չէին կարող գոյություն ունենալ խորհրդային վարչակարգի տարիներին, սկսեցին աստիճանաբար ներդրվել նո-

---

[1] Տե՛ս **Поланьи К.**, Великая трансформация: политические и экономические истоки нашего времени / Пер. с англ. А. А. Васильева, С. Е. Феодорова. Под общ. ред. С. Е. Феодорова.- СПб.: Алетейя, 2002, էջ 257-258: 22.

[2] Տե՛ս **Թորոսյան Տ.** Հասարակական համակարգի հետխորհրդային տրանսֆորմացիա, «Գիտություն» հրատ., Երևան, 2006, 421 էջ; Погосян Г. Армянское общество в трансформации/ изд. "Лусабац", Ереван, 2003, էջ 460.

[3] Տե՛ս **Huntington S.** The Third Wave: Democratization in the Late Twentyeth Century. Norman and London, University of Oklahoma Press, 1991, 366p.

ռանկախ Հայաստանի Հանրապետությունում: Հատկանշական է այն հանգամանքը, որ խորհրդային միակուսակցական քաղաքական համակարգը, որը մերժում էր այլախոհական քաղաքական կուսակցությունների գոյությունը, քաղաքական բազմակարծությունն ու մրցակցությունը, ինքնին սահմանափակում էր իրական մրցակցային քաղաքական պայքարի որևէ հնարավորություն: Քաղաքական համակարգի փոխակերպման կարևորագույն պատճառներից մեկը նաև դարձավ խորհրդային կենտրոնացված քաղաքական իշխանության գործելաոճը, որը հասարակության քաղաքականապես ակտիվ շերտերին հնարավոր և անհնար բոլոր միջոցներով հեռացնում էր իրական քաղաքական մրցապայքարից: Սակայն Խորհրդային Միության վերջին տարիներին՝ հատկապես Գորբաչովյան վերակառուցման շրջանում, արդեն նկատվում էին քաղաքական բազմակարծության ճանաչման, շուկայական ազատ տնտեսության ձևավորման, կառավարման ապագաղափարականացման միտումներ[1]: Այս իմաստով պատահական չենք համարում այն, որ չունենալով խորքային պատկերացումներ ժողովրդավարական արժեհամակարգի, քաղաքական կուսակցությունների ազատ գործունեության, դրա մեխանիզմների մասին՝ հետխորհրդային Հայաստանի Հանրապետության հասարակությունը ոգևորությամբ սպասում էր հասարակական կյանքի կտրուկ փոփոխություններին: Մեր կարծիքով, սա իրապես արդարացված էր, քանի որ միայն ժողովրդավարական վարչակարգի պայմաններում է հնարավոր ապահովել հասարակության լայն հատվածների մասնակցությունը քաղաքական գործընթացներին, հատկապես՝ քաղաքական իշխանության ձևավորմանը, որտեղ խիստ կարևոր դերակատարություն ունի բազմակուսակցության հաստատումը և դրա իրացումը իրական քաղաքական կյանքում: Խորհրդային իշխանության տարիներին միութենական բոլոր հանրապետություններում խորհրդարանական համակարգերի փոխարեն հաստատված էր բյուրոկրատական և ամբողջատիրական համակարգ, որտեղ կոմունիստական կուսակցությունը հանդիսանում էր գլխավոր ինստիտուտը: Խորհրդային իշխանությունը իրեն էր ենթար-

[1] Տե՛ս **Крыштановская О**. Трансформация старой номенклатуры в новую российскую элиту. Общественные науки и современность. 1995, № 1, сс. 63-73.

կել հասարակական կյանքի բոլոր ոլորտները: Նրա գոյության մոտ յոթ տասնամյակում նրանում առկա բոլոր հանրապետություններում իշխանությունը պատկանում էր Կոմունիստական կուսակցությանը՝ իհարկե ունենալով առանցքային դերակատարություն, այլ կերպ ասած, այս ձևով փաստացիորեն երաշխավորվում էր Կոմունիստական կուսակցության ամբողջատիրական գերակայությունը, քանի որ հանրապետությունների քաղաքական կյանքը, դրանից բխող յուրաքանչյուր ոլորտ ու բնագավառ, ղեկավարում էր Կենտկոմի առաջին քարտուղարը՝ կուսակցապետության դասական բանաձևով:

Սովորաբար, ժողովրդավարությանը անցում կատարած երկրների փորձը ցույց է տալիս, որ ըստ իրականացվող բարեփոխումների հետապնդած նպատակի՝ այդ փոխություններն ընթանում են երկու խոշոր փուլով՝ ազատականացման և բուն ժողովրդավարացման ճանապարհով: Մեր կարծիքով Հայաստանի երրորդ Հանրապետության ազատականացման փուլը սկսվեց, երբ 1988թ. Խորհրդային Միության պատմության մեջ առաջին անգամ Խորհրդային Հայաստանի Գերագույն խորհրդի երեք թափուր տեղերի ընտրություններում համազգային շարժման ներկայացուցիչները **մրցակցային պայքարում ընտրվեցին պատգամավորներ** (Աշոտ Մանուչարյան, Լևոն Տեր-Պետրոսյան, Ռաֆայել Ղազարյան): Հետագայում արդեն, երբ իշխանության եկավ Հայոց համազգային շարժումը՝ Հայաստանի Գերագույն խորհրդի **1990թ. օգոստոսի 23-ի հռչակագրով** երկրում սկիզբ առան ժողովրդավարական բարեփոխումներ: Գերագույն խորհրդի նոր ընտրությունների հետևանքով Հայաստանում աստիճանաբար ձևավորվեց խորհրդարանական կառավարման համակարգը՝ միակուսակցական ղեկավարությամբ: Ըստ էության սա մի շրջան էր, երբ փոփոխվում էր կառավարող մարմնի գաղափարախոսությունը, իսկ բուն կառուցվածքը՝ կուսակցական համակարգը մնում էր նույնը: Այսպիսով պետք է փաստենք, որ Հայաստանի իշխանությունները կանգնած էին, մի կողմից՝ պետականության ստեղծման, մյուս կողմից՝ ամբողջատիրական, վարչահրամայական սոցիալիստական համակարգից ժողովրդավարական-իրավական համակարգին անցնելու մարտահրավերների առջև:

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԱԶԱՏԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԵՎ ԲԱԶՄԱԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ 1980-ԱԿԱՆՆԵՐԻ ՎԵՐՋ ԵՎ 1990-ԱԿԱՆՆԵՐԻ ՍԿԻԶԲ

ՀԽՍՀ-ում այլախոհական շարժումը սաղմնավորվել էր դեռևս 1960-ականներից, որի նպատակը Կոմունիստական կուսակցության դիրքերի թուլացումն էր և նոր քաղաքական մտքի զարգացումը: Դրա վառ դրսևորումը տեղի ունեցավ արդեն 1967թ.-ին **Ազգային միացյալ կուսակցության** հիմնադրմամբ, որն իր շուրջն էր համախմբել Հայաստանի անկախության համար պայքարող բազմաթիվ համախոհների[1]: Արդեն 1989թ.-ի դեկտեմբերին ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նստաշրջանում հանրապետությունում գործող ժողովրդական շարժման ղեկավարությունն իրացնող «Ղարաբաղ» կոմիտեի անունից ԳԽ պատգամավոր Լևոն Տեր-Պետրոսյանը հանդես եկավ ելույթով՝ ընդգծելով Հայաստանում ժողովրդավարության հաստատման խիստ անհրաժեշտությունը: Լևոն Տեր-Պետրոսյանի ելույթը, սակայն, այդքանով չէր ավարտվում, քանի որ նույնիսկ առաջարկվում էր՝ Հայաստանը դարձնել ԽՍՀՄ առաջին հանրապետությունը, որտեղ պետք է դադարեցվեր կոմունիստական կուսակցության մենիշխանությունը՝ դրա փոխարեն հաստատելով **բազմակուսակցական համակարգ**[2]: Այստեղ հարկ ենք համարում նշել, որ մեր կարծիքով 1989 թ. նոյեմբերին **Հայոց համազգային շարժման (ՀՀՇ)** և **Սահմանադրական իրավունք միության (ՍԻՄ)** ստեղծմամբ, ինչպես նաև դեռ 1987-ից **Ազգային ինքնորոշում միավորման (ԱԻՄ)** և քաղաքական բնույթի այլ կազմակերպությունների ձևավորմամբ ՀԽՍՀ-ում ոչ միայն արդեն իսկ հաստատվել էին բազմակուսակցական համակարգի սաղմերը, այլ նաև փաստացիորեն խոսք էր գնում պետական կառավարման նոր համակարգի ներդրման անհրաժեշտության մասին, որտեղ խաղի կանոնները պետք է սահմանվեին ժողովրդավարական ինստիտուտների հաստատմամբ և կիրառմամբ:

Ինչպես նշվել է, Հայաստանում ժողովրդավարության վերափոխման գործընթացում կարևորագույն նշանակություն է ունեցել մի շարք օ-

---

[1] Տե՛ս **Հարությունյան Վ.**, Այլախոհությունը Խորհրդային Հայաս-տանում, Ե., 2014:

[2] Տե՛ս **Տեր-Պետրոսյան Լ.**, Ընտրանի (Ելույթներ, հոդվածներ, հարցազրույցներ), Ե., 2006, էջ 43-45:

ռենքների ընդունումը, որի թվում է նաև բազմակուսակցական համակարգի ներդրումը նախատեսող օրենքը[1]: Որպես այդպիսին **բազմակուսակցական համակարգի հիմնարար մեկնարկը կարող ենք համարել Գերագույն խորհրդի 1990 թ. ընտրությունները**, երբ պետությունում փաստացիորեն առաջին անգամ տեղի ունեցավ իրական քաղաքական պայքար, որի անմիջական հետևանքը դարձավ Կոմունիստական կուսակցության դիրքերի զգալի նվազումը[2]: Այսպիսով, խորհրդարանական ընտրություններն անցան երկու հակադիր արժեքներ դավանող կողմերի միջև, որի արդյունքում խորհրդարանը դարձավ առավել բազմազան (առաջացան 4-5 խմբակցություններ ու քաղաքական հոսանքներ)[1]: 1990 թ. մայիսի ընտրությունների արդյունքներով **Հայոց համազգային շարժման** կազմած կոալիցիայի ներկայացուցիչների թիվը խիստ տպավորիչ էր՝ ի տարբերություն Կոմունիստական կուսակցությանը հարող պատգամավորների թվի, ինչն էլ հիմք է տալիս փաստելու, որ քաղաքական խմբավորումների միջև գոյություն ունեցող հարաբերակցության փոփոխությունն այլևս կայացած փաստ էր: Այդ տարիներին կատարվեցին տնտեսական և քաղաքական բնույթի մի շարք կարևոր փոփոխություններ, որոնք իրենց հերթին անկյունաքարային նշանակություն ունեցան դեպի ժողովրդավարության անցման և բազմակուսակցության հաստատման համար: Գերագույն խորհուրդը 1990թ. օգոստոսի 23-ին ընդունեց «Անկախ պետականության հաստատման գործընթացի սկիզբն» ազդարարող՝ Հայաստանի անկախության հռչակագիրը, որոշակիացրեց Հայաստանի պետական և հասարակական կառուցվածքի հիմնական սկզբունքները՝ իշխանությունների տարանջատում, սեփականության ձևերի հավասարություն, խոսքի, խղճի մամուլի, ժողովների, միտինգների, ցույցերի ազատություններ, քաղաքական բազմակարծություն, բազմակուսակցականություն, կուսակցությունների հավասարություն, զինված ուժերի և իրավապահ մարմինների ապաքաղաքականացում: Հատկանշական է այն, որ 1990 թվականի սկզբնամասում Հայաստանում տիրում էր միաս-

---

[1]Տե՛ս **Լիպարիտյան Ժ.**, Պետականության մարտահրավերները. Հայ քաղաքական միտքը անկախությունից ի վեր, թարգմ՝. Հ. Հարությունյան, «Արմատ» ԺԻՊԱԿ, Ե., 1999, էջ 18:

[2] Տե՛ս **Մինասյան Է.**, Հայաստանի Երրորդ Հանրապետության պատմություն, Ե., 2013, էջ 104:

նական այն տեսակետը, համաձայն որի, Հայաստանը պետք է վերածվի բազմակուսակցության և ազատ ժողովրդավարության պետության: Այս մասին փաստում է նաև ՀՀ արտաքին գործերի նախարարի առաջին տեղակալ **Ժիրայր Լիպարիտյանը**՝ նշելով, որ հենց այդ գաղափարի իրագործման համար հիմնվեցին քաղաքական նոր կուսակցություններ, Գերագույն խորհրդի մի շարք անդամներ ստեղծեցին կուսակցություններ, որոնք նախկինում գոյություն չէին ունեցել Հայաստանում[2]: Այս իմաստով, մի շարք օրենքներ, ինչպիսիք էին՝ քաղաքական ու հասարակական կազմակերպությունների մասին օրենքը, մամուլի ազատության մասին օրենքը, կրոնի ու խղճի ազատության մասին օրենքը ՀՀ խորհրդարանի կողմից վավերացվեցին մինչև 1991 թ.-ի կեսը: Բազմակուսակցության և բազմակարծության կարևորագույն նվաճումներից էր նաև 1990թ.-ի գերագույն խորհրդի ընտրություններից հետո տեղի ունեցած Գերագույն խորհրդի նախագահի մրցակցային ընտրությունները, որն ընթացավ չորս փուլով: Կոմունիստական կուսակցությունն առաջադրել էր **Վլադիմիր Մովսիսյանի** թեկնածությունը, իսկ ՀՀՇ-ն՝ «Ղարաբաղ» կոմիտեի անդամ, ՀՀՇ վարչության նախագահ **Լևոն Տեր-Պետրոսյանի**: Բացի այս երկու քաղաքական գործիչներից՝ որպես ՀԽՍՀ ԳԽ նախագահի թեկնածուներ, քննարկվում էին նաև **Վ. Մանուկյանի, Ռ. Ղազարյանի, Պարույր Հայրիկյանի, Հ. Սիմոնյանի, Թ.Դիլանյանի** անունները[3]: Գերագույն խորհրդի նախագահի ընտրությունների վերջում՝ ամենավճռորոշ փուլ դուրս եկան միայն երկու թեկնածուներ՝ ՀՀՇ-ն ներկայացնող Լևոն Տեր-Պետրոսյանը և Կոմկուսի թեկնածու Վլադիմիր Մովսիսյանը: Գերագույն խորհրդի նախագահ ընտրվեց Լ. Տեր-Պետրոսյանը, որին կողմ էր քվեարկել 140 պատգամավոր (Վ. Մովսիսյանին՝ 76)[1]: Լ. Տեր-Պետրոսյանը, ընտրվելով Գերագույն խորհրդի նախագահի պաշտոնին, հրաժարվեց ՀՀՇ վարչության

---

[1] Տե՛ս **ՀՀ Գերագույն խորհուրդ**, 1990-1995, Ե., 1995, էջ 115:

[2] Տե՛ս **Լիպարիտյան Ժ.**, Պետականության մարտահրավերները. Հայ քաղաքական միտքը անկախությունից ի վեր, թարգմ՝. Հ. Հարությունյան, «Արմատ» ԺԻՊԱԿ, Ե., 1999, էջ 25:

[3] Տե՛ս ԳԼԽ սույն նիստի արձանագրությունն ամբողջությամբ հասանելի է՝ Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱՎԱ), ֆ. 207, ց. 62, գ. 13:

նախագահի պաշտոնից և կուսակցության վարչության անդամությունից՝ դրանք համարելով քաղաքական տեսակետից անհամատեղելի, սակայն պահպանեց ՀՀՇ գաղափարակրի և կուսակցության անդամի կարգավիճակը[2]: Հաղթանակ տանելով՝ Լ.Տեր-Պետրոսյանը հայտարարեց, որ Գերագույն խորհրդի նախագահի պաշտոնում իր գործունեությունը միտված է լինելու համաժողովրդական Սահմանադրության ընդունման ու օրենքների գերակայության, գործադիր, օրենսդիր և դատական մարմինների տարանջատման, հասարակական կյանքի ապակենտրոնացման, բազմակուսակցական համակարգի հաստատմանն ու իրագործմանը:

Այսպիսով, բազմակուսակցական համակարգի սաղմերի ներդրմանը, դրա փաստացի հաստատմանը և կիրառմանը, բնականաբար, պետք է հետևեր նաև իրավական ամրագրումը: Հաշվի առնելով Հայաստանի ինքնատիպ դրությունը, երբ իշխանության էին եկել անկախության կողմնակիցները, մինչդեռ պետությունը շարունակում էր մնալ ԽՍՀՄ կազմում՝ իրավական այդ ամրագրումը պիտի կատարվեր միայն բազմակուսակցական համակարգի փաստացի հաստատումից հետո: Նմանօրինակ իրավիճակում լիովին օրինաչափ էր, երբ միակուսակցական համակարգին կտրականապես ընդդիմացող տարամետ գաղափարախոսություններով պատգամավորները, պետք է թափ հաղորդեին բազմակուսակցական համակարգի սահմանման իրավական ասպեկտների սահմանման գործընթացին: Հենց համանման աշխատանքի արդյունքն էլ դարձավ 1991 թ. փետրվարի 26-ին ընդունված **«Հասարակական-քաղաքական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքը**, որն ամրագրում էր քաղաքական կուսակցությունների ձևավորման և գործունեության հիմնադրույթները, հիմնադրումն ու գրանցումը, նրանց ֆինանսական գործունեության նկատմամբ սահմանվում էր պետական վերահսկողություն, կուսակցությանը ներկայացվում իր ֆինանսական գործունեության մասին տարեկան հաշվետվություն ներկայացնելու պահանջ, ինչպես հասարակական-քաղա-

---

[1]Տե՛ս ԳԽ նախագահի ընտրության արդյունքների առթիվ կազմված թիվ 4 արձանագրությունն ու առնչվող մյուս տեղեկատվությունը համապարփակորեն հասանելի են՝ ՀԱԱ, ֆ. 207, ց. 64, գ. 66:

[2] Տե՛ս **Տեր-Պետրոսյան Լ.**, նշվ. աշխ., էջ 139:

քական կազմակերպությունների գործունեության կասեցման և արգելման հետ կապված հարաբերությունները[1]:

Վերոնշյալ օրենքի ամրագրումից շատ չանցած տրվեց փաստացի գործունեություն իրականացնող քաղաքական կուսակցությունների իրավական գրանցման գործընթացի մեկնարկը: «Հասարակական-քաղաքական կազմակերպությունների մասին» օրենքի կարևոր հետևանքներից մեկն այն է, որ դրա ընդունմամբ հնարավորություն տրվեց երկար ընդմիջումից հետո **հայրենիքում ազատ քաղաքական գործունեություն ծավալել ազգային-ավանդական կուսակցություններին**՝ Հայ Հեղափոխական Դաշնակցությանը, Ռամկավար Ազատական և Սոցիալ Դեմոկրատ Հնչակյան կուսակցություններին: Այս կուսակցությունների վերահաստատումը մեծապես նպաստեց քաղաքական կյանքի աշխուժացմանը Հայաստանում:

---

[1] Տե՛ս **Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժողովածու** (1990-1995), էջ 115-118: Համաձայն **«Հասարակական-քաղաքական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի**՝ հասարակական-քաղաքական կազմակերպության գրանցման դեպքում սահմանվում էր պետական տուրք 5 հազար ռուբլու չափով, որը գանձելու էր արդարադատության նախարարությունը դրական որոշումն ընդունելուց հետո, սակայն տվյալ օրենքի որևիցե տարրի խախտում թույլ տված կազմակերպությունը չէր գրանցվելու մինչև խախտման վերացումը: Օրենքի ընդունման մասին ՀՀ ԳԽ-ի որոշումն ուժի մեջ էր մտնում հրապարակման պահից՝ 1991 թ. ապրիլի 2-ից: Ընդամենը բաղկացած լինելով թվով ութը հոդվածից՝ օրենքը բազմակողմնակիորեն սահմանում էր պետություն մեջ քաղաքական գործունեություն ծավալող հասարա-քաղաքական կազմակերպությունների գործունեության շրջագիծը: Ամրագրվում էր, որ հասարա-քաղաքական կազմակերպությունը կամավոր սկզբունքով միավորված, ընտրական ցենզ ունեցող ՀՀ քաղաքացիների ծրագիր և կանոնադրություն մշակած խումբն է: Ուշագրավ է նաև այն պնդումը, ըստ որի՝ պետական իշխանության մարմինների ձևավորման և գործառնության մասնակցելու իրավունքը պատկանում էր միայն համանման միավորումներին: Օրենքում նաև հստակ ամրագրված էր այն քաղաքացիների մասին, որոնք չէին կարող որևէ կերպ լինել հասարա-քաղաքական կազմակերպության անդամ (ՀՀ արդարադատության ու ներքին գործերի նախարարության, դատախազության, դատական մարմինների աշխատակիցներ և բանակում ծառայողներ): Ակնառու է նաև այն, որ «Հասարակական-քաղաքական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքը հասարա-քաղաքական կազմակերպություններին արգելում էր՝ **ղեկավարվել** ՀՀ տարածքից դուրս գործող կազմակերպությունների ու պետական մարմինների կողմից, **ֆինանսավորվել** ՀՀ տարածքից դուրս գտնվող աղբյուրներից, **հիմնադրել** կազմակերպական կառույցներ ՀՀ պետական մարմիններում, ձեռնարկություններում, կազմակերպություններում և ուսումնական հաստատություններում, **իրագործել** ՀՀ իշխանության, պետական և քաղաքական կարգի բռնի փոփոխություն կամ քաղաքացիների ու կազմակերպությունների դեմ ուղղված բռնի գործողություն, **համագործակցել** բռնություն կիրառող կազմակերպությունների հետ, **հրահրել** թշնամանք ազգային, ռասայական, կրոնական ու սոցիալական խմբերի միջև:

Այս ամենի ապացույցն է նաև այն, որ 1991 թ.-ին ՀՀ-ում պաշտոնապես գրանցվել ու քաղաքական գործունեություն են ծավալել մոտ 22 քաղաքական կազմակերպություն, որոնց թվում էին ՀՀՇ-ն, ԱԻՄ-ը, ՀՀԿ-ն, ՀՔԴՄ-ն, ՀՅԴ-ն, ՀԴԿ-ն, ՀՌԱԿ-ը և այլն[1]: Այստեղ պետք է արձանագրել, որ այլևս անշրջելի էր նորանկախ Հայաստանի Հանրապետության քաղաքական համակարգում բազմակուսակցության և բազմակարծության սկզբունքների հաստատումը:

Հատկանշական ենք համարում նաև նշել այն, որ չպետք է պնդել, թե ի հայտ եկած բոլոր կուսակցություններն ակտիվ քաղաքական պայքարի մեջ են եղել: Ինչպես ժողովրդավարական բազմաթիվ պետություններում, այնպես էլ Հայաստանում քաղաքական մրցապայքարն ընթանում էր բազմաթիվ կուսակցություններից միայն մի քանիսի միջև, որոնք որևէ ձևով կարողանում էին ազդել քաղաքական կյանքի վրա և մրցակցել: Սակայն այս ամենով հանդերձ, կարծում ենք, **բազմակուսակցության իրավական հաստատման օրինաչափ հանգուցակետը դարձավ խոշոր կուսակցությունների տրոհումը**: Հայաստանի երրորդ հանրապետության գոյության առաջին հնգամյակին այդպես էլ չհաջողվեց ստեղծել գաղափարապես ամուր քաղաքական կազմակերպություն, որը կարողանար խուսափել լրջագույն պառակտումներից: Հենց այս ամենի արդյունքում էր, որ տրոհումներից չխուսափեցին ՀՀՇ-ն, ԱԻՄ-ը, ՀԿԿ-ն, ՀՌԱԿ-ը և այլն: Օրինակ, ՀՀՇ-ի ներսում առաջացած ռազմավարական բնույթի տարաձայնությունները հանգեցրին նրա պառակտմանը և նոր կուսակցության առաջացմանը: ՀՀՇ-ից անջատվեցին Ազգային ժողովրդավարական միությունը (ԱԺՄ), որի ղեկավարումը ստանձնեց Վազգեն Մանուկյանը, «Ժողովրդավարական հայրենիք» և այլ կուսակցական կազմակերպություններ: 1990 թ.-ին ՀՌԱԿ-ից դուրս եկան մի շարք համախոհներ, որոնք ստեղծեցին Ռամկավար-ազատական (լիբերալ-դեմոկրատական) և Ժողովրդական կուսակցությունները: «Առաքելություն» կուսակցությունը

[1] Տե՛ս **Աբրահամյան Հ.**, Ժողովրդավարությունը և քաղաքական կուսակցությունները, Ե., 2009, էջ 62:

ստեղծվեց «Ղարաբաղ» կոմիտեի Գյումրիի կազմակերպությունների գործիչների կողմից[1]:

1991 թ. փետրվարի 26-ին ընդունելով «Հասարակական-քաղաքական կազմակերպությունների մասին» օրենքը՝ ՀՀ Գերագույն խորհուրդը Հայաստանում հաստատեց բազմակուսակցական համակարգ, որի պայմաններում էլ քաղաքական ուժերը ձեռնամուխ եղան անկախության հիմնախնդրի քննությանն ու դրա իրագործման աշխատանքներին: Կարելի է համաձայնվել այն կարծիքի հետ, ըստ որի՝ բազմակուսակցականության սկզբնավորումը Հայաստանում ոչ միանշանակ է եղել, ինչն էլ թույլ է տալիս այն բաժանելու երկու փուլերի՝ 1990-94 թթ. և 1994թ.-ից հետո[2]: Առաջին փուլում միջկուսակցական պայքարը բավական ընդունված կանոնների համատեքստում էր ընթանում, իսկ 1994-ին ՀՅԴ-ի կասեցումից հետո այդ գործընթացը մուտք գործեց ճգնաժամային փուլ: Այլ կերպ ասած, կուսակցությունների միջև առաջացած հարաբերությունների լարվածությունը հնարավոր չեղավ հաղթահարել առանց արմատական լուծումների, ինչն էլ բացասական ազդեցությունը թողեց միջկուսակցական փոխվստահության վրա: Կարծում ենք բավական արժանահավատ է տեսակետը, ըստ որի՝ քաղաքական հետագա զարգացումները (հատկապես 1995-96 թթ. և 1998-99 թթ. ընտրական շրջանները) ցույց տվեցին, որ թե՛ իշխանական, թե՛ ընդդիմադիր կուսակցություններն առճակատումների հետևանքով միմյանց հյուծեցին՝ այրելով քաղաքական առողջ համակարգի կազմակերպման հավանականությունը: Հետևաբար, բազմակուսակցական համակարգի ձևավորման ուշացմանը զգալիորեն խաթարեց ԼՂ հակամարտությունը և մասնավորապես Ադրբեջանի հետ պատերազմը[3]:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով՝ «Հասարակական-քաղաքական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի կարևորագույն արձանագրումն այն էր, որ կուսակ-

---

[1]Տե՛ս **Մինասյան Է.**, նշվ. աշխ., էջ 263:

[2] Տե՛ս **Մինասյան Է.**, նշվ. աշխ., էջ 265:

[3] Տե՛ս **Թորոսյան Տ.**, Հասարակական համակարգի հետխորհրդային տրանսֆորմացիա, Ե., 2006, էջ 150:

ցություններին անկաշկանդ գործելու հնարավորություն էր տալիս։ Մեր համոզմամբ, այս փաստը կարևոր է նրա համար, որ ԽՍՀՄ փլուզումից հետո նման վերափոխումը պետք է դիտարկել աննախադեպության համատեքստում, քանի որ քաղաքական կազմակերպությունների գործունեությունը կարգավորող այդ օրենքը լիովին ամբողջատիրության դեմ էր։ Եվ մեր համոզմամբ, լինելով ամբողջատիրական համակարգի դեմ և ժողովրդավարության գործառնության համար խիստ անհրաժեշտ տարր՝ քաղաքական կուսակցությունները նորանկախ Հայաստանում չկարողացան ինստիտուցիոնալ առումով դառնալ քաղաքական դաշտում հասարակության համար խիստ կարևորվող ինստիտուտներ, քանի որ ՀՀ քաղաքացիները գրեթե բնազդային անվստահություն էին տածում քաղաքական կուսակցությունների հանդեպ, ինչը գալիս էր խորհրդային վարչակարգում կենտկոմի հետ ունեցած իրենց փորձառությունից։ Այս մասին բավական հիմնային կերպով անդրադարձել է ՀՀ արտաքին գործերի նախարարի առաջին տեղակալ Ժիրայր Լիպարիտյանը՝ գրելով, որ քաղաքական կուսակցությունները հասարակությանը իրենց կարծիքը փոխելու առանձնապես շատ առիթ չեն տվել, ինչը պայմանավորված էր մասամբ անիրատես ակնկալությունների պատճառով, մասամբ էլ նոր քաղաքական կուսակցությունների ու դրանց ղեկավարների վարքի ու բարքի հանդեպ քաղաքացիների տածած հակակրանքի հետևանքով[1]։ Վերոնշյալ օրենքի և առհասարակ Հայաստանի Հանրապետությունում բազմակուսակցության համակարգի կայացման գործում նաև էական նշանակություն է տրվում այն հանգամանքին, որ համաձայն նոր օրենքի և Սահմանադրության մի շարք հոդվածների՝ քաղաքական կուսակցություններն ազատորեն հնարավորություն են ստանում մասնակցություն ունենալ օրենսդիր և գործադիր իշխանությունների կազմման գործընթացին[1]։

Բազմակարծությանն ու բազմակուսակցականությանն ուղղված բարեփոխումների թվում, բացի «Հասարակական-քաղաքական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքից, պետությունը ձեռնամուխ եղավ

---

[1] Տե՛ս **Լիպարիտյան Ժ.**, Պետականության մարտահրավերները. Հայ քաղաքական միտքը անկախությունից ի վեր, թարգմ՝. Հ. Հարությունյան, «Արմատ» ԺԻՊԱԿ, Ե., 1999, էջ 20

նաև հասարակության ժողովրդավարացմանը միտված օրենսդրական այլ հիմքերի ստեղծմանը ևս[2], որոնք ևս իրենց էական ազդեցությունն ունեցան նորանկախ հանրապետության հասարակական և քաղաքական կյանքում բազմակարծության և բազմակուսակցության սկզբունքների հաստատման ու տարածման գործընթացում: Համանման օրինակներից էին հանդիսանում դեռևս 1996թ. նոյեմբերի 1-ին ուժի մեջ մտած «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքը, որը որը ՀՀ քաղաքացիական հասարակության իրավական դաշտի կառուցման հիմք հանդիսացավ: «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքում ամրագրվեց բազմակուսակցությանն ուղղված այնպիսի կարևոր արձանագրում, համաձայն որի, հասարակական-քաղաքական կազմակերպությունները հռչակվեցին իրավահավասար, իսկ նրանց ղեկավար մարմիններին պարտադրվեց գտնվել հանրապետության տարածքում[3]: Հենց այս օրենքով, պետք է փաստենք, որ ՀՀ-ում ամրապնդվեց բազմակուսակցական համակարգի ձևավորման իրավական հիմքերը, որը բնականոն

---

[1] Տե՛ս **Քեռյան Գ.Մ**. Բազմակուսակցության հաստատումը Հայաստանի Հանրապետությունում 1990-2000թթ. (պատմաքաղաքագիտական ակնարկ), էջ 54:

[2] Տե՛ս «**ՀՀ-ում սեփականության մասին**» (31.10.1990, https://www.arlis.am/documentview.aspx?docid=67), **«Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին»** (10.02.1998, https://www.arlis.am/documentview.aspx?docID=28458), **«Մամուլի և զանգվածների լրատվության մյուս միջոցների մասին»** (16.10.1991, https://www.arlis.am/documentview.aspx?docid=88), **«Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին»** (06.07.1991, https://www.arlis.am/documentview.aspx?docID=67169) օրենքները:

[3] Տե՛ս **«Հասարակական-քաղաքական կազմակերպությունների մասին» օրենք** ընդունված 1991թ. փետրվարի 26-ին. -Եր.:Հայաստան. 1993, էջ 5-7:

«Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքի կարևորագույն արձանագրումներից մեկն այն էր, որ դրա ընդունմամբ պետության զարգացման անորոշությունները կանխելու նպատակով կուսակցությունների գործունեության վրա դրվեցին սահմանափակումներ: Մասնավորապես արգելվեց՝ **ղեկավարվել** ՀՀ տարածքից դուրս գտնվող կազմակերպությունների և պետական մարմինների կողմից, ինչպես նաև մտնել տվյալ կազմակերպությունների կազմակերպական կառուցվածքի մեջ, **ձեռնարկել** ՀՀ իշխանության պետական և քաղաքական կարգի բռնի փոփոխություն, քաղաքացիների ու կազմակերպությունների դեմ ուղղված բռնի գործողություններ, ինչպես նաև հանդես գալ նման կոչերով և **համագործակցել** բռնություն իրականացնող կազմակերպությունների հետ, **ստանալ** նյութական և ֆինանսական օժանդակություն ՀՀ տարածքից դուրս գտնվող ցանկացած աղբյուրներից, ՀՀ պետական մարմիններից և պետական հաստատություններից՝ բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի, **տիրապետել** ֆինանսական և տնտեսական գործունեություն իրականացնող օբյեկտներ՝ բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի:

կերպով զարգացավ և համակարգվեց նաև ՀՀ Ազգային ժողովի կողմից **2002թ. ընդունված «Կուսակցությունների մասին» օրենքով**[1]: Ինչ վերաբերում է քաղաքական համակարգի փոփոխությանը, ապա կարող ենք ընդհանրացնել, որ անկախության հռչակումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքական համակարգը առանձնապես չէր տարբերվում արևմտյան զարգացող քաղաքական համակարգերից՝ մշակված ժողովրդավարական և օրենսդրական մեխանզիմներով, սակայն որակական իմաստով ՀՀ քաղաքական կուսակցությունները և կազմակերպությունները ներքաղաքական կյանքի կազմակերպման ու կարգավորման գործում դեռևս չէին կատարում այնպիսի կարևոր դերը, ինչպես արևմտյան ժողովրդավարություններում: Մեր կարծիքով, պատճառն այն էր, որ հասարակական լայն զանգվածները իրենց շահերի և արժեհամակարգային կողմնորոշումների պաշտպանությունը այդ կառույցների մեջ չէին տեսնում, որն էլ հանգեցում էր հասարակության կուսակցական կառույցների հետ ամուր կապերի բացակայությանը: Հետազոտության հետագա հատվածներում կտեսնենք, որ հասարակական մասշտաբում գաղափարական խոր արմատներ չունենալու արդյունքում բավական հաճախ քաղաքականա կուսակցությունները քաղաքական մրցապայքարից հեռանում են իրենց լիդերի ձախողմանը զուգահեռ:

Այսպիսով, ներկայացնելով դեռևս ԽՍՀՄ փլուզման վերջին տարիներին խորհրդային Հայաստանում տեղի ունեցած այլախոհական-անկախական տրամադրությունները, Հայաստանի երրորդ Հանրապետության

---

[1] Տե՛ս **«Կուսակցությունների մասին օրենքը»**.- Եր.: Պաշտոնական տեղեկագիր, 2005, էջ 52: Եթե 1991թ.-ի օրենքը իր թվով ութ հոդվածներով նպաստավոր պայմաններ էր ստեղծում պետության ներսում ժողովրդավարական արժեքների ինստիտուցիոնալ ձևավորման համար, ապա 2002թ.-ի **«Կուսակցությունների մասին օրենքը»** իր թվով երեսուներեք հոդվածով դասակարգում էր կուսակցությունների գործունեությունը: Այն նպատակամղված էր հստակեցնել քաղաքական կուսակցությունների ինստիտուցիոնալացման ուղին ամրապնդելով ներկայացուցչական ժողովրդավարության և բազմազանության սկզբունքները: Օրինակ համաձայն վերոնշյալ օրենքի՝ «Յուրաքանչյուր քաղաքացի իրավունք ունի այլ քաղաքացիների հետ կուսակցություններ ստեղծելու և դրանց անդամագրվելու՝ նրանց ծրագրերը և կանոնադրությունները ընդունելու և ճանաչելու պայմանով, միևնույն ժամանակ, կուսակցությունից ազատորեն դուրս գալու միջոցով»: Կուսակցական համակարգի ինստիտուցիոնալ գործունեության իմաստով կարևոր են նաև կուսակցությունների ստեղծման (հոդ. 11-14), ներքին կառուցվածքի (հոդ.15-19), իրավունքների և պարտականությունների (հոդ.20-25) սկզբունքները:

անկախության առաջին մի քանի տարիներին տեղի ունեցած ժողովրդավարական բարեփոխումները և օրենսդրական մի շարք մեխանիզմների ներդրումը՝ կարծում ենք, որ պետական բարեփոխումների և կենսական քաղաքական մրցապայքար հաստատելու համար խիստ անհրաժեշտ քաղաքական կուսակցությունների վերաբերյալ քաղաքական համակարգի գործունեության տրամաբանական փոփոխությունը, մի շարք օրենքների ստեղծումն ու լրամշակումը հիմք հանդիսացան հանրապետությունում բազմակարծության և բազմակուսակցական համամակարգի ձևավորման: Արդյունքում հենց այս ամենի շնորհիվ էր, որ նորանկախ Հայաստանի Հանրապետությունում թույլատրվեցին քաղաքական կուսակցությունների քաղաքական ազատ գործունեությունը, որի անմիջական և բաղկացուցիչ մասն էին հանդիսանալու կուսակցական լիդերները:

Гарик Керян, Ваге Погосян, Процесс утверждения многопартийной системы и особенности институционализации партий в Республике Армения в 1990-2002 гг.- Представляя диссидентско-независимые настроения, имевшие место в Советской Армении в последние годы распада СССР, демократические реформы, имевшие место в первые годы независимости Третьей Республики Армения и введение ряда законодательных механизмов, мы считаем, что политические партии очень необходимы для установления государственных реформ и жизненно важной политической конкуренции.Логичное изменение политической системы, создание и изменение ряда законов явились основой для формирования плюрализма и многопартийности системы в республике. В результате именно благодаря всему этому в новой независимой Республике Армения была разрешена свободная политическая деятельность политических партий, непосредственным и неотъемлемым звеном которых должны были стать партийные лидеры.

Garik Keryan, Vahe Poghosyan, The process of establishing a multi-party system and the peculiarities of the institutionalization of parties in the Republic of Armenia in 1990-2002 - Representing the dissident-independent sentiments that took place in Soviet Armenia in the last years of the collapse of the USSR, the democratic reforms that took place in the early years of the independence

of the Third Republic of Armenia and the introduction of a number of legislative mechanisms, we believe that political parties are very necessary to establish state reforms and vital political competition. The logical change in the political system, the creation and change of a number of laws were the basis for the formation of pluralism and a multi-party system in the republic. As a result, it was thanks to all this that the free political activity of political parties was allowed in the newly independent Republic of Armenia, the direct and integral link of which was to be party leaders.

Ուղարկվել է խմբագրություն 20.12.2022թ.
Գրախոսվել է 12.01.2023թ.
Ստորագրվել է տպագրության 13.01.2023թ.